2019թ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մարզում գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են **189607.4հա**

- ընդամենը ոռոգվող հողեր՝ - 6622.9 հա
- ընդամենը վարելահող՝ - 15628հա

որից ոռոգվող՝ - 2599.8 հա

բազմամյա տնկարկներ - 1978.9 հա

- պտուղ՝ - 1036.6 հա
- խաղող՝ - 948.3 հա
- տնամերձ հողեր՝ - 3120 հա

որից բազմամյա տնկարկներ - 1810հա

- պտուղ - 1503հա
- խաղող - 307հա
- բանջար- բոստանային 1310հա
- **Ընդամենը բազմամյա տնկարկներ 3788.9 հա**
- խոտհարք - 5060.8 հա

որից ոռոգվող - 175. հա

- արոտ՝ - 92452 հա
- այլ հողատեսքեր՝ - 74562.3. հա

Մարզում առկա է 11249 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն:

Գործում են 308, ֆերմերային և գյուղացիական տնտեսություններ

որից՝

փոքր տնտեսություն՝ 234

միջին տնտեսություն՝ 39

խոշոր տնտեսություններ՝ 35

Մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 6622.9 հա, որից վարելահող՝ 2599.8 հա, կամ ընդհանուր վարելահողերի 17 տոկոսը:

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել գարնանացան գարու 0.95տ, առվույտի 1.124տ, աշնանացան ցորենի 7.44տ, կորնգանի 0.98տ, եգիպտացորենի 0.027տ, սիսեռի 0.056տ սերմացուներ:

Եղեգնաձոր ՋՕԸ-ի կողմից իրականացվում է ոռոգման ջրի մատակարարում՝ ըստ ջրապահանջի: Առ 01.07.2019թ տրվել է 2 650 000մ^3 ջուր /21.45%/, հասույթը կազմել է 29 150 000 դրամ, գանձվել է 32 240 000դրամ:

Ներկայացվում է 2018-2019թթ ցանքերի համեմետական վերլուծությունը աղյուսակի տեսքով.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա		
		2018թ	2019թ	Տարբ.
1	Հացահատիկ և հատիկ	1907	1755	-152
2	Բանջարեղեն	411	349	-62
3	Բոստան	31	14	-17
4	Կարտոֆիլ	160	124	-36
5	Պտուղ, հատապտուղ	2514	2533.5	19.5
6	Խաղող	1200	1255	55
7	Կերային կուլտուրաներ	1984	1794	-190
8	Տեխնիկական	21	23	2
8	Ընդ.ցանքատարածություն	4480	4060	- 420

2019թ. մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 4060 հա,

Մարզի Արփի և Մալիշկա համայնքներում սկսվել է հացահատիկի հունձը, կուտակվել է 3420տ խոտ, այս պահի դրությամբ արտադրվել է 12տ կարտոֆիլ, 29տ բանջարեղեն, 100տ պտուղ և հատապտուղ:

Համաձայն համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկագրի մարզում առկա է 20 հացահատիկահավաք կոմբայն, որոնցից սարքին են 17-ը: Եղած կոմբայնները բավարար են ըստ գոտիականության ապահովելու հացահատիկի հունձը:

2019թ հունվարի մեկի դրությամբ մարզում առկա է 18523 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 7773 գլուխ, մանր եղջերավոր՝ 14100 գլուխ, խոզեր՝ 3558գլուխ , թռչուններ՝ 108580 թև և մեղվաընտանիք՝ 23821 փեթակ:

2019 թվականի առաջին կիսամյակում անասնաբուժական ծառայությունների կողմից իրականացվել են հետևյալ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները՝

Կանխարգելիչ միջոցառումներ.

Պաստերելիոզ խ.ե.կ.1834 գլուխ, մաշկաբորբ խ.ե.կ 11315 գլուխ , դաբաղ խ.ե.կ 23785 գլուխ, սիբիրախտ խ.ե.կ 21 488գլուխ, դաբաղ մ.ե.կ 6610 գլուխ, խոզերի ժանտախտ 6430

գլուխ, թռչունների ժանտախտ 42685 թև, ձիերի սիբիրախտ 335 գլուխ, մեղուների վարոատոզ 24680 փեթակ:

Ախտորոշիչ միջոցառումներ.

Տուբերկուլյոզ խ.ե. կ 389 գլուխ, բրուցելյոզ խ.ե.կ 9693գլուխ, որից 49-ը դրական, բրուցելյոզ մ.ե.կ 10688 գլուխ, որից 360-ը դրական:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ, Գետափ բնակավայրերում առկա է 7 հակակարկտային կայանքներ, /560հա ծածկողականությամբ/, 2019թ Ելփին բնակավայրում տեղադրվել է ևս մեկ կայանք:Կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ:

Մարզպետարանում և բոլոր համայնքներում ֆերմերների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կազմակերպվել են սեմինարներ և մանրամասն ներկայացվել 2019թ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական օժանդակության ծրագրերը:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն

02.07.2019